ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-1219[1]-17.12.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 03-ի ՀՕ-402-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասում «կոմիտեի նախագահը» բառերը փոխարինել «Պետական եկամուտների կոմիտեի նախագահը (այսուհետ՝ կոմիտեի ղեկավար)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) վերնագրում «պաշտոնները» բառը փոխարինել «պաշտոնների դասակարգումը եւ անվանացանկը» բառերով,

2) լրացնել 7-րդ մաս՝ հետեւյալ խմբագրությամբ.

«7. Մաքսային մարմնում՝ ըստ պաշտոնների խմբերի, սահմանվում են մաքսային ծառայության հետեւյալ պաշտոնները.

1) մաքսային ծառայության բարձրագույն պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի վարչության պետ.

2) մաքսային ծառայության գլխավոր պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի վարչության պետի տեղակալ.

բ. մաքսային մարմնի բաժնի պետ.

գ. մաքսային մարմնի բաժանմունքի պետ

դ. մաքսային մարմնի բաժնի պետի տեղակալ.

ե. մաքսային մարմնի գլխավոր մաքսային տեսուչ.

3) մաքսային ծառայության առաջատար պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի ավագ մաքսային տեսուչ.

4) մաքսային ծառայության կրտսեր պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի մաքսային տեսուչ:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետում «ուսումնական կենտրոնի» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ ուսումնական կենտրոն)», իսկ «հավաստագիր» բառից հետո՝ «(այսուհետ՝ պատրաստման հավաստագիր)» բառերը,

բ. 2-րդ կետում «անհրաժեշտ վերապատրաստում» բառերը փոխարինել «մաքսային ծառայողի պատրաստման դասընթացը, ուսումնական կենտրոնի կողմից ստացել են պատրաստման հավաստագիր կամ» բառերով,

գ. լրացնել 3-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3) մաքսային ծառայողներ են եւ սույն օրենքի 15-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով ունեն ծառայողական առաջխաղացման իրավունք»,

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3. Մաքսային ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար եւ կրտսեր թափուր պաշտոններ առաջանալու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են պատրաստման հավաստագիր ունեցող՝ մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում ներառված անձանցից կամ մաքսային ծառայողներից կամ ծառայողական առաջխաղացման իրավունք ունեցող մաքսային ծառայողներից՝ հարցազրույցի միջոցով:»,

3) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 8.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 8.1. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելությունը, մաքսային ծառայողի պատրաստումն ուսումնական կենտրոնում

1. Մաքսային ծառայողի պատրաստման նպատակով ուսումնական կենտրոնը մաքսային մարմնի օժանդակությամբ տարեկան առնվազն 1 անգամ կազմակերպում եւ անցկացնում է մաքսային ծառայողի, այդ թվում՝ ղեկավար պաշտոնների, պատրաստման դասընթացի մասնակցության համար ընդունելություն (այսուհետ՝ ընդունելություն): Սույն մասի իմաստով ղեկավար պաշտոններ են հանդիսանում վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժնի պետի պաշտոնները:

2. Ընդունելության կարգը հաստատում է կոմիտեի ղեկավարը: Ընդունելության կարգով կարգավորվում են նաեւ ընդունելության հայտարարության

հրապարակման, ընդունելության անցկացման պարբերականության, ընդունելության տեղերի սահմանման, ընդունելության դիմումների եւ կից փաստաթղթերի ներկայացման, թեստավորման եւ հարցազրույցի անցկացման, հարցազրույցի հանձնաժողովի ձեւավորման կարգը, բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման, բարեվարքության հարցաթերթիկի ուսումնասիրության եւ գնահատման մեթոդաբանությունը, ընդունելության արդյունքների ամփոփման, ընդունելության կազմակերպման եւ անցկացման մաքսային մարմնի եւ մաքսային մարմնի ենթակայությանը հանձնված կազմակերպության օժանդակության հետ կապված հարաբերությունները:

3. Ընդունելությանը չի կարող մասնակցել այն քաղաքացին, որը չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված՝ տարիքային ցենզի, բարձրագույն կրթության եւ հայերենին տիրապետելու եւ 49-րդ հոդվածով սահմանված պահանջները, կամ առկա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը կամ ընդունելության մասնակցության դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 1 օրացուցային տարվա ընթացքում ստացել է սույն հոդվածի 9-րդ, 14-րդ մասերով կամ սույն օրենքի 8.3-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված հարցազրույցի արդյունքներով բացասական գնահատական:

4. Ընդունելության հայտարարությունը, ի թիվս այլ տեղեկատվության, պետք է պարունակի հետեւյալ տվյալները.

1) ընդունելությանը ներկայացվող պահանջները.

2) ընդունելությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, այդ թվում՝ կոմիտեի ղեկավարի հաստատած՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձեւանմուշը:

5. Ընդունելությունն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում եւ հարցազրույց:

6. Թեստավորման պահանջները հաստատում է կոմիտեի ղեկավարը, որով սահմանվում են թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձեւավորելու պահանջները, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն միավորը:

7. Ընդունելության երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում կոմիտեի ղեկավարի սահմանած՝ թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն եւ դրանից բարձր միավորներ ստացած անձինք:

8. Հարցազրույցն անցկացնում է կոմիտեի ղեկավարի ձեւավորած հանձնաժողովը:

9. Հարցազրույցի կազմակերպման համար ձեւավորված հանձնաժողովը դիմողների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը հաշվի է առնում ընդունելության հարցազրույցի փուլը հաղթահարած մասնակիցներին որոշելու համար: Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնելու փաստի ուժով անձը տալիս է իր համաձայնությունը մաքսային մարմնի կողմից բարեվարքության հարցաթերթիկի ուսումնասիրության շրջանակում պետական մարմիններից եւ այլ անձանցից բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկով ներկայացված տեղեկությունները հավաստող տեղեկատվություն պահանջելու եւ ստանալու վերաբերյալ: Հարցազրույցի արդյունքներով մասնակիցը ստանում է դրական կամ բացասական գնահատական:

10. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի կազմակերպման կարգը, այդ թվում՝ դասընթացի բովանդակությունը, տեւողությունը, ամփոփիչ քննության կազմակերպման, այդ թվում՝ քննական հանձնաժողովի կազմավորման կարգը, դասընթացի արդյունքներն ամփոփելու, դասընթացը հաջողությամբ հաղթահարած

համարվելու չափանիշները սահմանում է կոմիտեի ղեկավարը: Դասընթացը պետք է պարունակի նաեւ բարեվարքությանը վերաբերող կրթական բաղադրիչ:

11. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի արդյունքներն ամփոփելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում դասընթացը հաջողությամբ հաղթահարած անձանց ուսումնական կենտրոնը էլեկտրոնային եղանակով տրամադրում է պատրաստման հավաստագիր (ղեկավար պաշտոնների դեպքում՝ ղեկավար պաշտոնի հավաստագիր), որը գործում է երեք տարի ժամկետով եւ որի ձեւը հաստատում է կոմիտեի ղեկավարը: Եթե պատրաստման հավաստագրի գործողության ավարտին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում ուսումնական կենտրոնի կողմից պատրաստման դասընթաց չի անցկացվել, ապա պատրաստման հավաստագրի գործողության ժամկետը երկարաձգվում է մինչեւ պատրաստման հավաստագրի գործողության վերջնաժամկետից հետո կազմակերպված պատրաստման դասընթացի արդյունքում պատրաստման հավաստագիր տրամադրելու օրը, իսկ պատրաստման դասընթացը չհաղթահարելու դեպքում՝ մինչեւ պատրաստման դասընթացը չհաղթահարելու օրը:

12. Ուսումնական կենտրոնում վերջին երկու տարվա ընթացքում 60 ակադեմիական դասաժամ դասավանդած մաքսային ծառայողները մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության թեստավորման եւ հարցազրույցի փուլերը հաղթահարելու դեպքում համարվում են մաքսային ծառայության պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած եւ ստանում են զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պատրաստման հավաստագիր:

13. Ծառայողական առաջխաղացման հիմքով մաքսային ծառայության պաշտոնի (այդ թվում՝ ղեկավար) նշանակվելիս մաքսային ծառայողի պատրաստման հավաստագրի գործողությունը շարունակվում է մինչեւ պատրաստման հավաստագրի գործողության՝ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ժամկետի

ավարտը: Ծառայողական առաջխաղացման արդյունքում զբաղեցրած պաշտոնին համապատասխան պատրաստման հավաստագրի ստացումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

14. Պատրաստման հավաստագիր ստանալուց հետո մինչեւ պաշտոնի նշանակումը բարեվարքության հարցաթերթիկով ներկայացված՝ կոմիտեի ղեկավարի կողմից սահմանած տվյալների մասով փոփոխության վերաբերյալ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կամ այլ տեղեկատվություն ստանալու դեպքում կոմիտեի ղեկավարի պատճառաբանված հրամանով կարող է անցկացվել նոր հարցազրույց: Հարցազրույցն անցկացնում է կոմիտեի ղեկավարի ձեւավորած հանձնաժողովը, որի կազմում ներառվում են նաեւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության եւ հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ: Սույն մասով նախատեսված հարցազրույցի անցկացման նպատակով պատրաստման հավաստագիր ստացած անձը սույն մասով նախատեսված հրամանով սահմանված ժամկետում ներկայացնում է սույն օրենքի 8.1-ին հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված ձեւանմուշի բարեվարքության վերաբերյալ նոր հարցաթերթիկ, որի ուսումնասիրությունը կատարվում է սույն օրենքի 8.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Հարցազրույցի արդյունքներով պատրաստման հավաստագիր ստացած անձը ստանում է դրական կամ բացասական գնահատական: Հարցազրույցի արդյունքում բացասական գնահատական ստանալու հիմքով պատրաստման հավաստագրի գործողությունը դադարում է:

15. Կոմիտեի ղեկավարի սահմանած կարգով մաքսային ծառայողի պատրաստում կարող է անցկացվել նաեւ առանձին պաշտոններ զբաղեցնելու համար:»:

Հոդված 5. Օրենքի 8.2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու հավաստագիր ունեցող անձինք (բացառությամբ մաքսային ծառայողների) ընդգրկվում են մաքսային մարմնի կողմից վարվող մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակներում՝ ըստ սույն օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված պաշտոնների համար անցկացվող ընդունելության տեսակների՝ դասընթացի ավարտին իրենց կողմից առավել բարձրից ցածր միավորներ հավաքելու սկզբունքից ելնելով: Ընդ որում, սույն օրենքի 8.3-րդ հոդվածով նախատեսված կարգով պաշտոնի նշանակումը, ինչպես նաեւ սույն օրենքի 8.1-ին հոդվածի 14-րդ մասով սահմանված հարցազրույցի արդյունքում բացասական գնահատական ստանալը հիմք է անձին ցուցակից հանելու համար:»:

Հոդված 6. Օրենքի 8.3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակումն իրականացվում է մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակներում ներառված անձանցից եւ պատրաստման հավաստագիր ունեցող մաքսային ծառայողներից, ինչպես նաեւ ծառայողական առաջխաղացման իրավունք ունեցող մաքսային ծառայողներից՝ սույն հոդվածով նախատեսված հարցազրույցի միջոցով՝ ըստ համապատասխան պաշտոնների ցանկի:»,

2) 2-րդ մասի՝

ա. 1-ին կետում «ծառայողների» բառից հետո լրացնել «՝ համապատասխան պաշտոնների» բառերը,

բ. 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2) պաշտոնին համապատասխան պատրաստման գործող հավաստագիր ունեցող եւ տվյալ պաշտոնում նշանակվելու համար դիմում ներկայացրած մաքսային ծառայողները.»,

գ. լրացնել 3-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3) սույն օրենքի 15-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով ծառայողական առաջխաղացման իրավունք ունեցող եւ տվյալ պաշտոնում նշանակվելու համար դիմում ներկայացրած մաքսային ծառայողները»,

3) լրացնել 2.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Հարցազրույցն անցկացվում է, եթե հարցազրույցին մասնակցում է առնվազն մեկ անձ:»,

4) լրացնել 7.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7.1. Հարցազրույցի փուլը հաղթահարելուց եւ պաշտոնի նշանակվելուց հետո բարեվարքության հարցաթերթիկով ներկայացված կոմիտեի ղեկավարի կողմից սահմանած տվյալների մասով փոփոխության վերաբերյալ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կամ այլ տեղեկատվություն ստանալու դեպքում կոմիտեի ղեկավարի պատճառաբանված հրամանով կարող է անցկացվել նոր հարցազրույց: Հարցազրույցն անցկացնում է կոմիտեի ղեկավարի ձեւավորած հանձնաժողովը, որի կազմում ներառվում են նաեւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության եւ հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ: Սույն մասով նախատեսված հարցազրույցի անցկացման նպատակով պաշտոնի նշանակված մաքսային ծառայողը սույն մասով նախատեսված հրամանով սահմանված

ժամկետում ներկայացնում է սույն օրենքի 8.1-ին հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված ձեւանմուշի բարեվարքության վերաբերյալ նոր հարցաթերթիկ, որի ուսումնասիրությունը կատարվում է սույն օրենքի 8.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Հարցազրույցի արդյունքներով ծառայողը ստանում է դրական կամ բացասական գնահատան: Դրական գնահատական ստանալու դեպքում մաքսային ծառայողը շարունակում է պաշտոնավարումը, իսկ բացասական գնահատական ստանալը հիմք է ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու համար:»,

5) 10-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ փորձաշրջանի արդյունքներով գնահատման, փորձաշրջանը չանցած համարվելու դեպքում լիազորությունների դադարեցման կարգը սահմանում է կոմիտեի ղեկավարը:»:

Հոդված 7. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «օրենքով» բառից հետո լրացնել «, իսկ մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման հարաբերությունները կարգավորվում են սույն հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով» բառերը,

2) 2-րդ մասից «3» թիվը հանել,

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

4) 4-6-րդ մասերում «եւ 3-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառերով,

5) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

6) լրացնել 7.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7.1. Մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված մաքսային ծառայողի կատարողականի գնահատումն իրականացվում է առնվազն տարին երկու անգամ: Սույն մասով նախատեսված մաքսային ծառայողի կատարողականի գնահատականը մաքսային ծառայողի կատարողականի հիմնական ցուցանիշների վրա հիմնված, ինչպես նաեւ մաքսային մարմնի ղեկավար կազմի որակական գնահատականի համակցված վերլուծությունն է, որի հիման վրա մաքսային ծառայողին տրվում է գնահատական: Մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման կարգը, գնահատականները, գնահատականների ազդեցությունը հավելավճարի հատկացման, մաքսային ծառայողի իրավական կարգավիճակի, այդ թվում՝ աշխատանքից ազատման, առաջխաղացման վրա սահմանում է կոմիտեի ղեկավարը: Սույն մասով սահմանված կարգով կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով կոմիտեի ղեկավարի սահմանած միջինից բարձր միավոր ստանալու դեպքում մաքսային ծառայողն իրավունք ունի ծառայողական առաջխաղացման: Կատարողականի գնահատման արդյունքներով երկու անգամ անընդմեջ կոմիտեի ղեկավարի սահմանած նվազագույնից ցածր միավոր ստանալը հիմք է մաքսային ծառայողին ծառայությունից ազատելու համար:»:

Հոդված 8. Օրենքի 17.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի ուսումնական կենտրոնի (այսուհետ՝ Ուսումնական կենտրոն)» բառերը փոխարինել «Ուսումնական կենտրոնի» բառերով,

2) 2-րդ մասի՝

ա. 1-ին կետից հանել «մասնագիտական» եւ «(այդ թվում՝ առաջխաղացման նպատակով վերապատրաստումը)» բառերը,

բ. 4-րդ կետում «հատուկ միջոցների եւ հրազենի» բառերը փոխարինել «օրենքով նախատեսված հատուկ եւ այլ միջոցների» բառերով:

Հոդված 9. Օրենքի 22.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին, 2-րդ եւ 4-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. 3-րդ կետում «8.2-րդ» բառը փոխարինել «8.3-րդ» բառով,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 42-րդ հոդվածում լրացնել 1.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Մշտական բնակության վայրից տարբերվող մաքսային մարմնում մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում մաքսային ծառայողի եւ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների համար ծառայության վայրում Կառավարության սահմանած կարգով տրամադրվում է բնակելի տարածք կամ բնակելի տարածքի վարձակալման համար ամենամսյա դրամական փոխհատուցում: Ծառայության վայրը մշտական բնակության վայրից տարբերվող համարվելու չափանիշները սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 12. Օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասում «առաջարկված թեկնածուներից» բառերը փոխարինել «՝ հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի հաստատած հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակից» բառերով:

Հոդված 14. Օրենքի 48-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում՝

ա. լրացնել 4.2-րդ, 4.3-րդ եւ 4.4-րդ կետեր՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4.2) սույն օրենքի 8.3-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված հարցազրույցի արդյունքում բացասական գնահատական ստանալը.

4.3) պատրաստման գործող հավաստագիր չունենալը.

4.4) մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման արդյունքներով տարեկան երկու անգամ անընդմեջ կոմիտեի ղեկավարի սահմանած նվազագույնից ցածր միավոր ստանալը.»,

բ. 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7) Կառավարության հաստատած՝ մաքսային ծառայության պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկում ընդգրկված որեւէ հիվանդությամբ տառապելը.»,

գ. 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

դ. 2-րդ պարբերության 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ..

«8) մաքսային մարմնի վարչության պետի կամ տեղակալի, բաժնի պետի կամ տեղակալի կողմից անհիմն որոշում ընդունելը, եթե դա հանգեցրել է մաքսային մարմնի գույքի անիրավաչափ օգտագործման, գույքի ամբողջականության խախտման կամ այլ վնասի»,

2) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

3) 9-րդ մասում «4-րդ» բառից հետո լրացնել «, 4.3-րդ» բառը, իսկ «ծառայողները» բառից հետո լրացնել «եւ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնողները» բառերը:

Հոդված 15. Օրենքի 49-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում լրացնել նոր նախադասություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալուն նախորդող վեց ամսվա ընթացքում գործող պատրաստման հավաստագրի առկայությունը պարտադիր չէ:»,

2) 2-րդ մասում «պաշտոն» բառից հետո լրացնել «, ինչի ընթացքում գործող պատրաստման հավաստագրի առկայությունը պարտադիր չէ» բառերը:

Հոդված 16. Օրենքի 51-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «եւ 4.1-ին կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով,

2) 2-րդ մասի 5-րդ կետից հանել «կոմիտեի ղեկավարի կողմից» բառերը:

Հոդված 17. Օրենքի ամբողջ տեքստում «մաքսային մարմնի ղեկավար» բառերը՝ համապատասխան հոլովաձեւերով, փոխարինել «կոմիտեի ղեկավար» բառերով՝ համապատասխան հոլովաձեւերով:

Հոդված 18.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող 4.3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 2 օրացուցային տարի հետո:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստացված պատրաստման եւ վերապատրաստման հավաստագրերը օրենքով սահմանված գործողության ժամանակահատվածում ունեն սույն օրենքով սահմանված պատրաստման հավաստագրերին համարժեք իրավաբանական ուժ:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Կ-1219/-17.12.2025-ՏՀ-011/1 *ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ*

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 03-ի ՀՕ-402-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասում «կոմիտեի նախագահը» բառերը փոխարինել «Պետական եկամուտների կոմիտեի նախագահը (այսուհետ՝ կոմիտեի ղեկավար)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) վերնագրում «պաշտոնները» բառը փոխարինել «պաշտոնների դասակարգումը եւ անվանացանկը» բառերով,

2) լրացնել 7-րդ մաս՝ հետեւյալ խմբագրությամբ.

«7. Մաքսային մարմնում՝ ըստ պաշտոնների խմբերի, սահմանվում են մաքսային ծառայության հետեւյալ պաշտոնները.

1) մաքսային ծառայության բարձրագույն պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի վարչության պետ.

2) մաքսային ծառայության գլխավոր պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի վարչության պետի տեղակալ.

բ. մաքսային մարմնի բաժնի պետ.

գ. մաքսային մարմնի բաժանմունքի պետ

դ. մաքսային մարմնի բաժնի պետի տեղակալ.

ե. մաքսային մարմնի գլխավոր մաքսային տեսուչ.

3) մաքսային ծառայության առաջատար պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի ավագ մաքսային տեսուչ.

4) մաքսային ծառայության կրտսեր պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի մաքսային տեսուչ:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետում «ուսումնական կենտրոնի» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ ուսումնական կենտրոն)», իսկ «հավաստագիր» բառից հետո՝ «(այսուհետ՝ պատրաստման հավաստագիր)» բառերը,

բ. 2-րդ կետում «անհրաժեշտ վերապատրաստում» բառերը փոխարինել «մաքսային ծառայողի պատրաստման դասընթացը, ուսումնական կենտրոնի կողմից ստացել են պատրաստման հավաստագիր կամ» բառերով,

գ. լրացնել 3-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3) մաքսային ծառայողներ են եւ սույն օրենքի 15-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով ունեն ծառայողական առաջխաղացման իրավունք»,

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3. Մաքսային ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար եւ կրտսեր թափուր պաշտոններ առաջանալու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են պատրաստման հավաստագիր ունեցող՝ մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում ներառված անձանցից կամ մաքսային ծառայողներից կամ ծառայողական առաջխաղացման իրավունք ունեցող մաքսային ծառայողներից՝ հարցազրույցի միջոցով:»,

3) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 8.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 8.1. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելությունը, մաքսային ծառայողի պատրաստումն ուսումնական կենտրոնում

1. Մաքսային ծառայողի պատրաստման նպատակով ուսումնական կենտրոնը մաքսային մարմնի օժանդակությամբ տարեկան առնվազն 1 անգամ կազմակերպում եւ անցկացնում է մաքսային ծառայողի, այդ թվում՝ ղեկավար պաշտոնների, պատրաստման դասընթացի մասնակցության համար ընդունելություն (այսուհետ՝ ընդունելություն): Սույն մասի իմաստով ղեկավար պաշտոններ են հանդիսանում վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժնի պետի պաշտոնները:

2. Ընդունելության կարգը հաստատում է կոմիտեի ղեկավարը: Ընդունելության կարգով կարգավորվում են նաեւ ընդունելության հայտարարության հրապարակման, ընդունելության անցկացման պարբերականության, ընդունելության տեղերի սահմանման, ընդունելության դիմումների եւ կից փաստաթղթերի ներկայացման, թեստավորման եւ հարցազրույցի անցկացման, հարցազրույցի հանձնաժողովի ձեւավորման կարգը, բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման, բարեվարքության հարցաթերթիկի ուսումնասիրության եւ գնահատման մեթոդաբանությունը, ընդունելության արդյունքների ամփոփման, ընդունելության կազմակերպման եւ անցկացման մաքսային մարմնի եւ մաքսային մարմնի ենթակայությանը հանձնված կազմակերպության օժանդակության հետ կապված հարաբերությունները:

3. Ընդունելությանը չի կարող մասնակցել այն քաղաքացին, որը չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված՝ տարիքային ցենզի, բարձրագույն կրթության եւ հայերենին տիրապետելու եւ 49-րդ հոդվածով սահմանված պահանջները, կամ առկա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը կամ ընդունելության մասնակցության դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 1 օրացուցային տարվա ընթացքում ստացել է սույն հոդվածի 9-րդ, 14-րդ մասերով կամ սույն օրենքի 8.3-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված հարցազրույցի արդյունքներով բացասական գնահատական:

4. Ընդունելության հայտարարությունը, ի թիվս այլ տեղեկատվության, պետք է պարունակի հետեւյալ տվյալները.

1) ընդունելությանը ներկայացվող պահանջները.

2) ընդունելությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, այդ թվում՝ կոմիտեի ղեկավարի հաստատած՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձեւանմուշը:

5. Ընդունելությունն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում եւ հարցազրույց:

6. Թեստավորման պահանջները հաստատում է կոմիտեի ղեկավարը, որով սահմանվում են թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձեւավորելու պահանջները, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն միավորը:

7. Ընդունելության երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում կոմիտեի ղեկավարի սահմանած՝ թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն եւ դրանից բարձր միավորներ ստացած անձինք:

8. Հարցազրույցն անցկացնում է կոմիտեի ղեկավարի ձեւավորած հանձնաժողովը:

9. Հարցազրույցի կազմակերպման համար ձեւավորված հանձնաժողովը դիմողների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը հաշվի է առնում ընդունելության հարցազրույցի փուլը հաղթահարած մասնակիցներին որոշելու համար: Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնելու փաստի ուժով անձը տալիս է իր համաձայնությունը մաքսային մարմնի կողմից բարեվարքության հարցաթերթիկի ուսումնասիրության շրջանակում պետական մարմիններից եւ այլ անձանցից բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկով ներկայացված տեղեկությունները հավաստող տեղեկատվություն պահանջելու եւ ստանալու վերաբերյալ: Հարցազրույցի արդյունքներով մասնակիցը ստանում է դրական կամ բացասական գնահատական:

10. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի կազմակերպման կարգը, այդ թվում՝ դասընթացի բովանդակությունը, տեւողությունը, ամփոփիչ քննության կազմակերպման, այդ թվում՝ քննական հանձնաժողովի կազմավորման կարգը, դասընթացի արդյունքներն ամփոփելու, դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու չափանիշները սահմանում է կոմիտեի ղեկավարը: Դասընթացը պետք է պարունակի նաեւ բարեվարքությանը վերաբերող կրթական բաղադրիչ:

11. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի արդյունքներն ամփոփելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում դասընթացը հաջողությամբ հաղթահարած անձանց ուսումնական կենտրոնը էլեկտրոնային եղանակով տրամադրում է պատրաստման հավաստագիր (ղեկավար պաշտոնների դեպքում՝ ղեկավար պաշտոնի հավաստագիր), որը գործում է երեք տարի ժամկետով եւ որի ձեւը հաստատում է կոմիտեի ղեկավարը: Եթե պատրաստման հավաստագրի գործողության ավարտին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում ուսումնական կենտրոնի կողմից պատրաստման դասընթաց չի անցկացվել, ապա պատրաստման հավաստագրի գործողության ժամկետը երկարաձգվում է մինչեւ պատրաստման հավաստագրի գործողության վերջնաժամկետից հետո կազմակերպված պատրաստման դասընթացի արդյունքում պատրաստման հավաստագիր տրամադրելու օրը, իսկ պատրաստման դասընթացը չհաղթահարելու դեպքում՝ մինչեւ պատրաստման դասընթացը չհաղթահարելու օրը:

12. Ուսումնական կենտրոնում վերջին երկու տարվա ընթացքում 60 ակադեմիական դասաժամ դասավանդած մաքսային ծառայողները մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության թեստավորման եւ հարցազրույցի փուլերը հաղթահարելու դեպքում համարվում են մաքսային ծառայության պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած եւ ստանում են զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պատրաստման հավաստագիր:

13. Ծառայողական առաջխաղացման հիմքով մաքսային ծառայության պաշտոնի (այդ թվում՝ ղեկավար) նշանակվելիս մաքսային ծառայողի պատրաստման հավաստագրի գործողությունը շարունակվում է մինչեւ պատրաստման հավաստագրի գործողության՝ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ժամկետի ավարտը: Ծառայողական առաջխաղացման արդյունքում զբաղեցրած պաշտոնին համապատասխան պատրաստման հավաստագրի ստացումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

14. Պատրաստման հավաստագիր ստանալուց հետո մինչեւ պաշտոնի նշանակումը բարեվարքության հարցաթերթիկով ներկայացված՝ կոմիտեի ղեկավարի կողմից սահմանած տվյալների մասով փոփոխության վերաբերյալ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կամ այլ տեղեկատվություն ստանալու դեպքում կոմիտեի ղեկավարի պատճառաբանված հրամանով կարող է անցկացվել նոր հարցազրույց: Հարցազրույցն անցկացնում է կոմիտեի ղեկավարի ձեւավորած հանձնաժողովը, որի կազմում ներառվում են նաեւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության եւ հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ: Սույն մասով նախատեսված հարցազրույցի անցկացման նպատակով պատրաստման հավաստագիր ստացած անձը սույն մասով նախատեսված հրամանով սահմանված ժամկետում ներկայացնում է սույն օրենքի 8.1-ին հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված ձեւանմուշի բարեվարքության վերաբերյալ նոր հարցաթերթիկ, որի ուսումնասիրությունը կատարվում է սույն օրենքի 8.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Հարցազրույցի արդյունքներով պատրաստման հավաստագիր ստացած անձը ստանում է դրական կամ բացասական գնահատական: Հարցազրույցի արդյունքում բացասական գնահատական ստանալու հիմքով պատրաստման հավաստագրի գործողությունը դադարում է:

15. Կոմիտեի ղեկավարի սահմանած կարգով մաքսային ծառայողի պատրաստում կարող է անցկացվել նաեւ առանձին պաշտոններ զբաղեցնելու համար:»:

Հոդված 5. Օրենքի 8.2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու հավաստագիր ունեցող անձինք (բացառությամբ մաքսային ծառայողների) ընդգրկվում են մաքսային մարմնի կողմից վարվող մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակներում՝ ըստ սույն օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված պաշտոնների համար անցկացվող ընդունելության տեսակների՝ դասընթացի ավարտին իրենց կողմից առավել բարձրից ցածր միավորներ հավաքելու սկզբունքից ելնելով: Ընդ որում, սույն օրենքի 8.3-րդ հոդվածով նախատեսված կարգով պաշտոնի նշանակումը, ինչպես նաեւ սույն օրենքի 8.1-ին հոդվածի 14-րդ մասով սահմանված հարցազրույցի արդյունքում բացասական գնահատական ստանալը հիմք է անձին ցուցակից հանելու համար:»:

Հոդված 6. Օրենքի 8.3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակումն իրականացվում է մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակներում ներառված անձանցից եւ պատրաստման հավաստագիր ունեցող մաքսային ծառայողներից, ինչպես նաեւ ծառայողական առաջխաղացման իրավունք ունեցող մաքսային ծառայողներից՝ սույն հոդվածով նախատեսված հարցազրույցի միջոցով՝ ըստ համապատասխան պաշտոնների ցանկի:»,

2) 2-րդ մասի՝

ա. 1-ին կետում «ծառայողների» բառից հետո լրացնել «՝ համապատասխան պաշտոնների» բառերը,

բ. 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2) պաշտոնին համապատասխան պատրաստման գործող հավաստագիր ունեցող եւ տվյալ պաշտոնում նշանակվելու համար դիմում ներկայացրած մաքսային ծառայողները.»,

գ. լրացնել 3-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3) սույն օրենքի 15-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով ծառայողական առաջխաղացման իրավունք ունեցող եւ տվյալ պաշտոնում նշանակվելու համար դիմում ներկայացրած մաքսային ծառայողները»,

3) լրացնել 2.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Հարցազրույցն անցկացվում է, եթե հարցազրույցին մասնակցում է առնվազն մեկ անձ:»,

4) լրացնել 7.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7.1. Հարցազրույցի փուլը հաղթահարելուց եւ պաշտոնի նշանակվելուց հետո բարեվարքության հարցաթերթիկով ներկայացված կոմիտեի ղեկավարի կողմից սահմանած տվյալների մասով փոփոխության վերաբերյալ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կամ այլ տեղեկատվություն ստանալու դեպքում կոմիտեի ղեկավարի պատճառաբանված հրամանով կարող է անցկացվել նոր հարցազրույց: Հարցազրույցն անցկացնում է կոմիտեի ղեկավարի ձեւավորած հանձնաժողովը, որի կազմում ներառվում են նաեւ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության եւ հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ: Սույն մասով նախատեսված հարցազրույցի անցկացման նպատակով պաշտոնի նշանակված մաքսային ծառայողը սույն մասով նախատեսված հրամանով սահմանված ժամկետում ներկայացնում է սույն օրենքի 8.1-ին հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված ձեւանմուշի բարեվարքության վերաբերյալ նոր հարցաթերթիկ, որի ուսումնասիրությունը կատարվում է սույն օրենքի 8.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Հարցազրույցի արդյունքներով ծառայողը ստանում է դրական կամ բացասական գնահատան: Դրական գնահատական ստանալու դեպքում մաքսային ծառայողը շարունակում է պաշտոնավարումը, իսկ բացասական գնահատական ստանալը հիմք է ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու համար:»,

5) 10-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ փորձաշրջանի արդյունքներով գնահատման, փորձաշրջանը չանցած համարվելու դեպքում լիազորությունների դադարեցման կարգը սահմանում է կոմիտեի ղեկավարը:»:

Հոդված 7. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «օրենքով» բառից հետո լրացնել «, իսկ մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման հարաբերությունները կարգավորվում են սույն հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով» բառերը,

2) 2-րդ մասից «3» թիվը հանել,

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

4) 4-6-րդ մասերում «եւ 3-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառերով,

5) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

6) լրացնել 7.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7.1. Մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված մաքսային ծառայողի կատարողականի գնահատումն իրականացվում է առնվազն տարին երկու անգամ: Սույն մասով նախատեսված մաքսային ծառայողի կատարողականի գնահատականը մաքսային ծառայողի կատարողականի հիմնական ցուցանիշների վրա հիմնված, ինչպես նաեւ մաքսային մարմնի ղեկավար կազմի որակական գնահատականի համակցված վերլուծությունն է, որի հիման վրա մաքսային ծառայողին տրվում է գնահատական: Մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման կարգը, գնահատականները, գնահատականների ազդեցությունը հավելավճարի հատկացման, մաքսային ծառայողի իրավական կարգավիճակի, այդ թվում՝ աշխատանքից ազատման, առաջխաղացման վրա սահմանում է կոմիտեի ղեկավարը: Սույն մասով սահմանված կարգով կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով կոմիտեի ղեկավարի սահմանած միջինից բարձր միավոր ստանալու դեպքում մաքսային ծառայողն իրավունք ունի ծառայողական առաջխաղացման: Կատարողականի գնահատման արդյունքներով ~~տարեկան~~ երկու անգամ անընդմեջ կոմիտեի ղեկավարի սահմանած նվազագույնից ցածր միավոր ստանալը հիմք է մաքսային ծառայողին ծառայությունից ազատելու համար:»:

Հոդված 8. Օրենքի 17.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի ուսումնական կենտրոնի (այսուհետ՝ Ուսումնական կենտրոն)» բառերը փոխարինել «Ուսումնական կենտրոնի» բառերով,

2) 2-րդ մասի՝

ա. 1-ին կետից հանել «մասնագիտական» եւ «(այդ թվում՝ առաջխաղացման նպատակով վերապատրաստումը)» բառերը,

բ. 4-րդ կետում «հատուկ միջոցների եւ հրազենի» բառերը փոխարինել «օրենքով նախատեսված հատուկ եւ այլ միջոցների» բառերով:

Հոդված 9. Օրենքի 22.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին, 2-րդ եւ 4-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. 3-րդ կետում «8.2-րդ» բառը փոխարինել «8.3-րդ» բառով,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 42-րդ հոդվածում լրացնել 1.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Մշտական բնակության վայրից տարբերվող մաքսային մարմնում մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում մաքսային ծառայողի եւ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների համար ծառայության վայրում Կառավարության

սահմանած կարգով տրամադրվում է բնակելի տարածք կամ բնակելի տարածքի վարձակալման համար ամենամսյա դրամական փոխհատուցում: Ծառայության վայրը մշտական բնակության վայրից տարբերվող համարվելու չափանիշները սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված ~~10~~12. Օրենքի 43-րդ հոդվածի՝

~~1) 1-ին մասում «օրենքով» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն օրենքով» բառերը,~~

~~2)~~ 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~11~~13. Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասում «առաջարկված թեկնածուներից» բառերը փոխարինել «՝ հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի հաստատած հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակից» բառերով:

Հոդված ~~12~~14. Օրենքի 48-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում՝

ա. լրացնել 4.2-րդ, 4.3-րդ եւ 4.4-րդ կետեր՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4.2) սույն օրենքի 8.3-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված հարցազրույցի արդյունքում բացասական գնահատական ստանալը.

4.3) պատրաստման գործող հավաստագիր չունենալը.

4.4) մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման արդյունքներով տարեկան երկու

անգամ անընդմեջ կոմիտեի ղեկավարի սահմանած նվազագույնից ցածր միավոր ստանալը.»,

բ. 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«7) Կառավարության հաստատած՝ մաքսային ծառայության պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկում ընդգրկված որեւէ հիվանդությամբ տառապելը.»,

գ. 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

դ. 2-րդ պարբերության 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ..

«8) մաքսային մարմնի վարչության պետի կամ տեղակալի, բաժնի պետի կամ տեղակալի կողմից անհիմն որոշում ընդունելը, եթե դա հանգեցրել է մաքսային մարմնի գույքի անիրավաչափ օգտագործման, գույքի ամբողջականության խախտման կամ այլ վնասի»,

2) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

3) 9-րդ մասում «4-րդ» բառից հետո լրացնել «, 4.3-րդ» բառը, իսկ «ծառայողները» բառից հետո լրացնել «եւ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնողները» բառերը:

Հոդված ~~13~~15. Օրենքի 49-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում լրացնել նոր նախադասություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալուն նախորդող վեց ամսվա ընթացքում գործող պատրաստման հավաստագրի առկայությունը պարտադիր չէ:»,

2) 2-րդ մասում «պաշտոն» բառից հետո լրացնել «, ինչի ընթացքում գործող պատրաստման հավաստագրի առկայությունը պարտադիր չէ» բառերը:

Հոդված ~~14~~16. Օրենքի 51-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «եւ 4.1-ին կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով,

2) 2-րդ մասի 5-րդ կետից հանել «կոմիտեի ղեկավարի կողմից» բառերը:

Հոդված ~~15~~17. Օրենքի ամբողջ տեքստում «մաքսային մարմնի ղեկավար» բառերը՝ համապատասխան հոլովաձեւերով, փոխարինել «կոմիտեի ղեկավար» բառերով՝ համապատասխան հոլովաձեւերով:

Հոդված ~~16~~18.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի ~~12~~14-րդ հոդվածի 1-ին կետով Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող 4.3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 2 օրացուցային տարի հետո:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստացված պատրաստման եւ վերապատրաստման հավաստագրերը օրենքով սահմանված գործողության ժամանակահատվածում ունեն սույն օրենքով սահմանված պատրաստման հավաստագրերին համարժեք իրավաբանական ուժ:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-1219-17.12.2025-ՏՀ-011/1), «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-1219[1] -17.12.2025-ՏՀ-011/1) եւ «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-1219[2] - 17.12.2025-ՏՀ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	Կառավարություն	«Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մաս	Հաշվի առնելով, որ տեղի է ունեցել վրիպակ՝ առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մասի վերջին նախադասությունից հանել «տարեկան» բառը:	**Ընդունվել է:** Նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մասի վերջին նախադասությունից «տարեկան» բառը հանվել է:	**Ընդունվել է:**
2.	Կառավարություն	«Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով, որ մաքսային ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները, իսկ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքով խրախուսանքի առանձին տեսակներ նախատեսված չեն, ուստի առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի (նոր համարակալմամբ՝ 12-րդ) 1-ին մասը, ինչպես նաև 2-րդ մասի համարակալումը հանել:	**Ընդունվել է:** Նախագծի 10-րդ հոդվածի (նոր համարակալմամբ՝ 12-րդ) 1-ին մասը, ինչպես նաև 2-րդ մասի համարակալումը հանվել են:	**Ընդունվել է:**

3.	Կառավարություն	«Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանվում են մաքսային ծառայողի տեղափոխման դեպքում երաշխիքների վերաբերյալ կարգավորումներ: Մասնավորապես, նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն մաքսային ծառայողին այլ տարածաշրջանի մաքսային մարմին **ծառայողական տեղափոխման դեպքում** նշված ծառայողի և նրա հետ բնակվող ընտանիքի անդամների համար ծառայության նոր վայրում Կառավարության սահմանած կարգով տրամադրվում է բնակելի տարածք կամ բնակելի տարածքի վարձակալման համար ամենամսյա դրամական փոխհատուցում: Սակայն, բացի տեղափոխման դեպքերից, մաքսային ծառայողն ի սկզբանե կարող է պաշտոնի նշանակվել իր մշտական բնակության վայրից տարբերվող մաքսային մարմնում: Հաշվի առնելով, որ վերոնշյալ դեպքում ևս առաջանում է մաքսային ծառայողին բնակելի տարածք կամ բնակելի տարածքի վարձակալման համար ամենամսյա դրամական փոխհատուցում տրամադրելու անհրաժեշտություն, ուստի առաջարկում ենք «Մաքսային	**Ընդունվել է:** Նախագծում լրացվել են նոր 10-րդ և 11-րդ հոդվածներ, որոնցով նախատեսվում են Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել, իսկ նույն օրենքի 42-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1-ին մաս: Միաժամանակ, նշված հոդվածների լրացմամբ պայմանավորված՝ խմբագրվել է Նախագծի հոդվածների համարակալումը:	**Ընդունվել է:**

			ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել և նույն օրենքի 42-րդ հոդվածում, որով սահմանվում են մաքսային ծառայողի սոցիալական երաշխիքներին, նյութական և սոցիալական ապահովությանը վերաբերող դրույթները, լրացնել նոր՝ 1.1-ին մաս, որի համաձայն մշտական բնակության վայրից տարբերվող մաքսային մարմնում մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում մաքսային ծառայողի եւ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների համար ծառայության վայրում Կառավարության սահմանած կարգով տրամադրվում է բնակելի տարածք կամ բնակելի տարածքի վարձակալման համար ամենամսյա դրամական փոխհատուցում: Ծառայության վայրը մշտական բնակության վայրից տարբերվող համարվելու չափանիշները սահմանում է Կառավարությունը: Ըստ այդմ Նախագծում լրացվել են նոր 10-րդ և 11-րդ հոդվածներ, որոնցով նախատեսվում են Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել, իսկ նույն օրենքի 42-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1-ին մաս: Միաժամանակ, նշված հոդվածների լրացմամբ		

			պայմանավորված՝ խմբագրվել է Նախագծի հոդվածների համարակալումը:		
4.	Կառավարություն	«Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»	Հաշվի առնելով, որ Նախագծում նոր հոդվածների լրացման արդյունքում Օրենքի 48-րդ հոդվածում փոփոխություններ և լրացումներ նախատեսող հոդվածի	**Ընդունվել է:** «12» թիվը փոխարինվել է «14» թվով:	**Ընդունվել է:**

		օրենքի նախագծի 16-րդ (նոր համարակալմամբ՝ 18-րդ) հոդվածի 1-ին մաս	համարակալումը փոփոխվել է՝ «12» թիվը փոխարինվել է «14» թվով, ուստի առաջարկում ենք Նախագծի 16-րդ (նոր համարակալմամբ՝ 18-րդ) հոդվածի 1-ին մասում «12» թիվը փոխարինել «14» թվով:		
5.	Կառավարություն	«Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մաս	Հաշվի առնելով, որ տեղի է ունեցել վրիպակ՝ առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մասի վերջին նախադասությունից հանել «տարեկան» բառը:	**Ընդունվել է:** Նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մասի վերջին նախադասությունից «տարեկան» բառը հանվել է:	**Ընդունվել է:**